

Պ Ա Յ Մ Ա Ն Ք

ՊՈՒԼԿԱՐԻԱ

Տարեկան . . . 12 ֆր.

Վեցամսեայ . . . 6 «

ԱՐՏԱՍԱՀԱՆԱՆ

Երկու քիւ միկ ծրարով

Տարեկան . . . 14 ֆր.

Վեցամսեայ . . . 7 ֆր.


ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2.60

Վեցամսեայ 1.50 Տօղար «

Կ Ա Ն Ե Ի Կ

Ծանոցանակ սուրբ
20 տարեկան



Լ Ր Ա Գ Ի Ր

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Ե Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

ԿԸ ՀՐԱՏԱՐԱՐՈՒԹԻ ԱՐԵՆ ԵՄԵՐՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

Հ Ա Ս Յ Ի

Relaction du journal

le vounk

VARNNA (Bulgaria)

Редакция

НАВѢСТНИКЪ

ИЗВѢСТНИКЪ

ВАРНА

Գրութեանը կտ չեմ
տրութիւն

ՈՒՇԱԳՐՈՒԹԻՒՆ

Մեր ներկայ տարեշրջանի տաս-
ներորդ ամիսն ալ լրանալուն առ-
թիւ կը վերջիւնենայ ցարդ չը
վճարող մեր բաժանորդներուն որ ի-
րենց պարտքը վճարել փութան :
Նոյնմիտէ սկսեալ ալ ինքի չորի-
սի զրկենք մեր այն բաժանորդ-
ներուն որոնք արդէն մէկ տարե-
կանէ աւելի կը պարտին մեզ : Այս
պիսիներու անունները ստորագրած
պիտի ըլլանք հրատարակել նոյնմ .
13 էն յետոյ :

ՈՐՆ Ե ՀԱՅ ՍԱՐԴ

Տեսէ՛ք սա հրապարակներու
և ճեմալայրերու վրայ սիքաբար
շրջագայող շիկ միւսիսները . տե-
սէ՛ք, սա զբօսարաններու և գա-
րեջրատուններու մէջ երկու գա-
ւաթ աւելի խոնարհ համար մըր-
ցումի ելլող սրկրամոխները . տե-
սէ՛ք սա պատուաւոր ամուսնութե-
նէ խոյս տուող բայց մութ անկիւն
ներէ անցնելով լպիւր իրաւունքի
մը քղանցքին կառչող և տար-
պասի մը արժանանալու համար
ընտանիքի մը հինգ օրուան սպ-
րուտը մէկէն չալլող ցորա-
կեացները . տեսէ՛ք, հանրային
լուրջ խնդրոյ մը կամ բարեգոր-
ծական հաստատութեան մը մա-
սին հինգ վայրկեան զոհելու ժա-
մանակ չունենալ կեղծոր, իսկ
անդին ուհի մը կամ զբօսասէրի
մը հետ ճշգրտած ժամէն 15 վայր-
կեան առաջ ժամադրաւայրը
հասնող առեւտրականը : Ասոնք
հայեր են, հայ երիտասարդներ
շիկ ու գոռող մեր «Հայ լսյի»
կը ներկայացնեն անոնք օտար
գիտողներուն առջև, բայց զերօ-
ններ են, բարձր բուն նշանակու-
թեամբը զերօններ հայ տառա-
պանքին, ազգային կեանքին,
հանրային հաստատութիւններու
հանգէպ : Անոնք իրենց համար
ծնած, միայն իրենք իրենց հա-
մար ապրող անձնասէրներ են,
որոնք շատ անգամ իրենց առաջ-
ջութիւնը ու քսակն ալ կը զո-

հեն վայրկեանական հաճոյքի ու
անհաշիւ խրախճանքի համար :
Հայ էմբլիկիւնքը, հայ աղնուա-
կանը Ի՞նչ հեղեղութիւն
Աստուած իմ, երբ ներկայ հայ
տառապանքին անհունութիւնը
բաղդատենք այդ «Հայ» կոչո-
ւողներուն կենցաղին ու վարքին
հետ :

Ի՞նչ զգլխիչ հիասթափումի մը
առջև կը գտնուի մարդ, երբ
վերջին նորաձեւութեան ամբող-
ջութեամբը իր իրանը պճնա-
ղարդած, ընթացիկ քաղաքովա-
րական բոլոր ձեւերը իւրացուցած
և քիչ թէ շատ թուրթ ու գրիչ լի-
զած շիկ միւսիս բաղդատութեան
դնէ, հայ տառապանքին տեսա-
կէտով, սա վանեցի բեռնակիրին
հետ, որ ոչ գալոց տեսեր է, ոչ
տարիներու ընթացքին մէջ քա-
նի մը ֆր. կրցեր է յատկացնել
իր հագստտին կամ կապուստին,
բայց դիտցեր է իր քամակը
ճնշող ծանր հակերուն տակէն
ձեռքը երկնցնել ու իր լուսնի
ձգել հայ գատին գանձանակը :
Ո՞րն է պատուաւոր հայ մարդը,
ա՞յն որ միայն իր ապուշ իրա-
նին պճնաղարդումը օտարին
ցուցադրելու և իր նիւթական
կարողութիւնը զբօսալայրերու և
ուհիներու արամադրելի ըրած
կապրի . անկարկիր թշուառին
ու անտարբեր ազգային վիճա-
կին . կամ ա՞յն որ իր տան-
ջանքով հալիւ ձեռք բերած հա-
ցաղինէն մաս մը միշտ հայ գա-
ղին յատկացնելով ցնցոտիներու
մէջ կը քաշըչուի : Բ՛ա՛հ, ո՞րը,
ո՞րն է պատուաւոր հայ մարդ :
— Ես իմ քուէս վերջինին կու-
տամ :

Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն

ՎԱՆԷՆ ԼՈՒՐԵՐ

«Արմէնիայի մէջ կը կար-
գանք :
Վանէն ուղղակի մեզ հասած
լուրերէ կիմանանք որ ճիշդ չէ
եղեր Անդրանիկին Վան մտած
լինելը : Ուրիշ մի քանի յեղա-

փոխարաններ են եղեր որ Վան
գնացեր և մի քանի տուների
մէջ ապաստաներ են : Կառավա-
րութիւնն իմանալով պաշարեր է
այդ տուներ և այդ պատրուա-
կով կրակի տուեր է անոնց դը-
րացի մի քանի տուներ : Մի քո-
նի փոքրիկ ընդհարումներ պա-
տահեր եւ երկու կողմէ մեռնող
ներ եղած են . ժողովուրդն ա-
տոնք տեսնելով բնականապէս
յուզուեր է և ունի քաղաքում
հար ապաստանի տեղեր փնտռե-
ր են : Հիւպտոտները միջամտելով
նորեկ յեղափոխականները խոս-
տացեր են իրենք հեռանալ Վա-
նէն եթէ ժողովուրդին կատարած
չլինի : Եւ կատարեց են իրենց
խոստում :

Իսկ խմբագրատ Անդրանիկի հա-
մար Վանի մէջ կը խօսուի եղեր
թէ իր ընկերներով մէկտեղ Այդ-
թամարի վանքը մտած է . թէ
թիւրք կառավարութիւնը նաեւ
յով զօրքեր և երկու թնդանթ
զրկեր է անոնց վրայ որ ունա-
կած են վանքը և ձերբակալեն
Անդրանիկը : Բայց ուրախութե-
թիւն չէ եղած և Անդրանիկ յա-
ջողեր է իր խմբով հեռանալ
վանքէն : Չգիտենք թէ ո՞րչափ
ճշմարիտ է Այդթամարի մասին
Վանի մէջ պատմութեմը : Բայց
սաչափ յայտնի է մեզ թէ Վանի
ծովին վրայ բանող փոքրիկ ա-
ռապատանտները թնդանթութե-
մբով Վան չեն կրնար ծնուայել
արդէն . անոնց մէջէն արձակուող
թնդանթները, ուրիշներին վը-
նասելէ առաջ, իրենց սաստիկ
ցնցումներով այդ նաւեր ու ի-
րենց մէջ գտնուած զօրքերը
կընկղմեն :

ՊՈՒԼԿԱՐ ԵՒ ՈՒՐԴ

ՄԵՐՁԵՑՈՒՄԸ

Սերպիոյ թագաւորին Սօֆիա այցե-
լութեան միջոցին պալատին մէջ սըր-
ւած երեկոյթին առթիւ երկու վեհա-
պետներու արտասանած բաժակաճա-
ռիքը որ ուշադրաւ են երկու ազգե-
րու ներկայ քաղաքականութեան տե-
սակետով նոյնութեամբ կը ներկայա-

ցնենք մեր ընթերցողաց :
Ֆերդինանտ Իշխանին բաժակաճառը
Վեհափառ Տէր

Այցելութիւնը, զոր Ձեր Վեհափա-
ռութիւնը բրաւ խնդի ու Պուլկար
ազգին, ցմիշտ յիշատակելի դէպք մը
պիտի մնայ Սերպիոյ ու Պուլկարիոյ
նոր պատմութեան մէջ :

Ձեր Վեհափառութիւնը, խորապէս
զետ ալից մեր պատմութեանց կենսա-
կան շահերուն ու պատմական ճակա-
տազրկն նոյնութեան, եւ ինձ նման
համոզուած, թէ պայմանները, որոնց
մէջ մեր համացեղ ու համակրօն եղ-
բայր ազգերը կապրին . Ի կը դար-
գանան, անոնց վրայ պարտք կը դնեն
գալ անկեղծ համաձայնութեան մը —
միակ պրաւական իրենց ստոյգ ու ան-
կախ յաստիքիմութեան — կարճ ժամա-
նակի մէջ ինձ տուաւ կարգ մը սպա-
ցոյցներ, թէ ազգն ալ, որուն ճակա-
տազրկը նախախնամութիւնը Ձեզ վըս-
տահեցած է, խորապէս կ'զգայ մտեր-
մական ու եղբայրական միացումի մը
պէտքը :

Սրտագին ընդունելութիւնը, որ
ցոյց տուեցաւ Ձեր Վեհափառութեան
սկսեալ պուլկարական հողին վրայ
Ձեր ոտք կոխած պահէն, թող Ձեզ
ըլլայ ոչ սակաւ փայլուն ապացոյց
մը, թէ իմ սիրելի ազգս ալ Կոպուրի
ամենամեկեղծ եղբայրական զղացում-
ներով դէպք իր ի մացեղ դրացիները,
եւ այն համոզումը զոյացուցած է,
թէ Սերպիոյ ու Պուլկարիոյ ապագան
կախում օտար իրենց փոխադարձ հա-
կոյցողութենէն և համարաչա գործու-
նէն չեն կրնար, մաւ որական ու անտե-
սակաւ . զորքացումի ճամբուն մէջ :

Վատահ որ այսօրուան տեսակցու-
թիւնը զեռ աւելի պիտի ամրապնդե-
այս համոզումը, պիտի կրախառնե-
կանանաւոր ու բարեբաւարիկ դարգա-
ցումը մեր գեղեցիկ երկիրներուն եւ
պիտի օգնէ մեր հատարակ ջանքերուն
խաղաղութեան պահպանումին հա-
մար, Ձեր Վեհափառութեան ջերմ
երախտագիտութիւնն կը յայտնեմ այս
սիրալիր այցելութեան համար, եւ
բոլորովին սրտալոյս կը բարձրացը-
նեմ բաժակա Ձեր Վեհափառութեան
թանկագին կենաց և բարեբաւարիկ
թագաւորութեան, Ձեր ճան և Ձեր
Ազգին բարօրութեան, մեծութեան ու
փառքին համար :

Իհրկ թագաւորին բաժակաճառը

Երբ մեկնեցայ դէպի Սօֆիա, որպէս
զի փոխարինեմ Ձեր Ա. Բարձրութեան
այցելութիւնը, հետ կը բերէի զեղե-
ցիկ բարեմաղղութիւններ Ձեր ճան ու
Պուլկար եղբայր Ազգին համար :
Նախահայրերուս գոն բարձրանա-

լուսն պէս, ես՝ մտադիր ընտանեաց
աւանդութեանցը, ըրի ամէն ինչ, որ-
պէս զի մեր երկու ազգերու շահերուն
նոյնութեան եւ Պուլկարիոյ հետ ան-
կեղծ մերձեցումի մը պէտքերն-բան մը
որ ի վաղուց արմատ ձգած է սերպ
ազգին մէջ—զաղափարը կարեւորու-
թիւն ստանայ եւ Սերպիոյ քաղա-
կանութեան սկիզբն ըլլայ:

Ուրախութեամբ կը տեսնեմ, թէ
չնորհիւ պարագաներուն, քանի որ
Ձեր Ա. Բարձրութեան ալ ներշնչուած
ինձ նման միեւնոյն փափաքներով,
մենք, կարճ ժամանակի մէջ, յաջողե-
ցանք մեր համանման ջանքերով մեր
վատահոլութեանը յանձնուած ազգերու
հղափարական կեանքին պայմանները
ստեղծելու:

Ձարկարտէն ցՍօֆիա եւ հոս Ձեր
Ա. Բարձրութեան մայրաքաղաքին
մէջ, ես առարկայ եղայ պուրկար ազ-
գի ամենաջերմ համակրութեան: Այդ
համակրութեան անկեղծ ցայցերը ինձ
համար ապացոյց մըն են, որ համա-
ձայնութեան ու համերաշխ գոր-
ծողութեան փափաքը կատարուած ի-
րողութիւն մըն է Պուլկարիոյ հղափար
պէս մէջ, եւ խոր արմատներ ձգած է
անոր սրտին մէջ:

Այս ընդունելութեան լուրը, զոր իմ
ազգս կսպասէ անհամբեր, պիտի հրճ-
ուեցնէ զայն, որ այլ եւս ապահով է,
թէ իր զգացումները դէպի համացեղ
ազգը, անկեղծ արձագանք պիտի դա-
նեն:

Փափաքելով, որ մեր այս երկրորդ
հանգիստը պուլկարական հողին
վրայ ամրացնէ մեր համակրութեան
թիւններու եղբայրակցութեան ու խա-
ղաղութեան պահպանումի սկսեալ
գործը, կը խմբմ Ձեր Ա. Բարձրու-
թեան բարեկենդանութեանը ու բա-
րեբաւութեանը թափանցումը, Ձեր փա-
ռաւոր Տան բարեկենդանութեանը եւ պուլ-
կար ազգին բարեկենդանութեանը ու յա-
ռաջընթացութեան համար, կեցցէ Ն. Ա. Բ.
պուլկարական Իշխանը, կեցցէ նորին
բարձր Տունը, կեցցէ պուլկար Ազգը:

ՄԻՍԻՈՆԱՐՆԵՐՈՒ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆԸ

Յրանաական մամուլին կողմէ այսօր
ծեծուող խնդիրներէ մին է միսիո-
նարներու պաշտպանութիւնը Արեւ-
ելքի եւ Չինաստանի մէջ, Հա-
կաղեքական Ֆրանսացիք նոյն իսկ
Իւրովի կը հարցնեն, « պէտք է
պաշտպանութիւնը ստանձնել օտար
երկրներ հաստատուող միաբանու-
թիւններուն, զորս մենք մեր մէ-
ջէն վանեցինք: »

Մասամբ այն կարծիքը կայ
թէ, Պատեթիւնը Եկեղեցիէն զա-
տեւել պարագային իսկ, Յրանաան-
պէտք է իր աւանդական պաշտպա-
նութիւնը չը զլանայ Արեւելքի ի
մասնաւորի Պաղեստինի ոչ թէ մի-
այն Ֆրանսացի այլ եւ օտար կը-
ղերականներուն: Եւ անոնք կը
վախնան թէ եթէ Յրանաս իր ա-
ւանդական պաշտպանի դերէն հրա-
ժարի չըլլայ որ ուրիշ պետու-
թիւն մը, զոր օրինակ Գերմանիա
կամ Աւստրիա զայն ստանձնէ:

Այս հարցի մասին նախարարապետ
Մ. Գոմպի յայտարարեց թէ իրեն տրա-
մաբանական կը թուի որ Արեւելքի
մէջ իւրաքանչիւր կրօնական հաս-
տակութիւն պէտք է պաշտպանուի ի-

րեն պատկանած պետութեան կողմէ:
Բայց այս կարծիքին դէմ կատարուի
թէ եթէ Յրանաս միայն իր հպատակ
միսիոնարներն պաշտպանէ իրեն ազգե-
ցութիւնը կիսնայ օտար հպատակներու
եւ մանաւանդ տեղացիներու առջեւ:

Այս կերպով խնդիրը քաղաքական
շահու վրայ կը դառնայ, եւ հայր կը
ծաղի դիտարկ թէ այդ շահը բաւական
մեծ է պահանջելու հոստը քրիստոն-
էից պաշտպանութեան պահպանումը,
կամ ընդհակառակը կրօնական գործե-
րու վրայ քաղաքական ուժի կիրա-
ռումը օգուտէ աւելի անպատեհու-
թիւններ չը ներկայացնէ:

Անցեալին մէջ միշտ կրօնա-
կան միսիոնարութիւնները միջոց նը-
կատուած են ծանօթանալու այն
երկրներուն ուր Յրանասն բաղ-
ձանք ունեցած է իր ազդեցութիւ-
նը տարածել: Խնդիրը միայն թուի-
քերը եւ Չինացիները քրիստոնեայ
ընելու վրայ չէր, այլ ալ աւելի
միսիոնարներու միջոցաւ այդ եր-
կրներուն մէջ ազդեցութեան եւ քա-
ղաքական արտօնութիւններ ստա-
նալու եւ մանաւանդ կրօնական
դարձումներով շփոթութիւններ ա-
ռաջ բերելու եւ այդ պատրուակաւ
շահաւոր ստանձնութիւններ ընելու մէջ
էր:

Այսօր ալ միեւնոյն նպատակաւ է որ
միսիոնարներու պաշտպանութեան եւ
նիւթական օգնութեան պահպանումին
վրայ կը պնդեն շատեր:

Ճիշդ դար մը առաջ Նաբոլէոն եւս
օտար երկրներ հաստատուող կղերին
համար սապէս կը մտածէր:

« Այդ կրօնաւորները ինձ շատ
օգտակար պիտի ըլլան Ասիայի,
Աֆրիկէի եւ Ամերիկայի մէջ: Ես
զանոնք պիտի դրկեմ ծանօթութիւն-
ներ քաղելու այդ երկրներուն վի-
ճակի մասին: Անոնց տարազը զի-
րենք կը պաշտպանէ եւ իմ քաղա-
քական ու վաճառականական նպա-
տակներս ծածկելու կը ծառայէ:
Ես անոնց տառջին անգամ 15000
ֆր. պիտի յատկացնեմ: Մեծ բան
մը չէ, բարբարոսներէ յարգուած
են եւ պաշտօնական ո՛ր եւ է հան-
գամանք չունենալով, անոնք չեն
կրնար կառավարութիւնը վտանգել:
Արդէն կրօնական ետանդը զանոնք
զսրծի կը մղէ եւ արհամարի կու-
տայ վտանգները որոնք քաղաքա-
կան գործակալի մը կարողութիւնէն
վեր են: »

Եթէ Հարիւր տարի առաջ Նա-
բոլէոն այսպէս կը խորհէր միսիո-
նարներու մասին, հանրապետական
Յրանասն ալ նոյնը խորհելէ եւ
այդ ոգւով շարժելէ չէր դադրած
մինչեւ ներկայ նախարարապետի
սա օրերը: Բայց խորհելու այդ ե-
ղանակին այսօր շատեր հակառակ են
ու կը փաստեն այսպէս:

Հեթանոսները քրիստոնէութեան
դարձնելու տեսակէտով միայն եթէ զա-
տեւէր արգելիչը ոչինչ է, կրնէ Ատոլֆ
Իւթթէ. օրինակի համար Չինաստա-
նան մէջ քրիստոնեայ եղողները ա-
նարդուածներն են որոնք միսիոնար-
ներուն կը գրեմ որ զերեւա պաշա-
պանեն կառավարութեան դէմ: Բազ-
մաթիւ վտեւերաթուղթեր այս մասին
մեզ ու եւ է կասկած չեն ձգեր կըսէ:

Գալով միսիոնարներու հաւաքած
աղայոց ասոնք անոնցմէ այն տե-
սակ կրթութիւն մը կառնեն որ ի-
րենք իրենց երկրին մէջ արմատա-
խիլ կըլլան: Գէշ աչքով կը դի-
տուին իրենց ազգակիցներէն, զորս
կը թողուն ընկերականութենէ որուն

հաւատարմներէն ու սովորութիւն-
ներէն ձեռք քաշած են, եւ այլն »

Արդէն հաւատարմի եղողները
շատ անշան թիւ մը կը կազմեն,
եւ չկայ, օրինակի համար, ուսեալ
կամ բարեկեցիկ Չինացի մը որ
հաւատարմութեան եղած ըլլայ: Սա ցոյց
կուտայ թէ ցեղ մը որ շատ հին
քաղաքակրթութիւն մը, բարոյա-
կան մը եւ իր բարեբերուն կա-
տարեալ հաւատքը ունի չուզի զա-
նոնք օտար կրօնաւորներու պատ-
ուէրներուն զոհիլ, որ աստիճան ալ
բարձր ըլլայ ասոնց ճարտասանու-
թիւնը: Նոյնպէս Չինացիք շատ կը
զայրանան իրենց օտար կրօն մը ա-
ռաջարկուելուն դէմ, կրօնք մը որ
իրենց բարբի, պէտքն ու սովո-
րութիւններուն չը համապատասխա-
ներ. եւ այս պատճառաւ անոնք
միսիոնարներուն խիստ հակառակ են,
կրնէ արեւալաղէտը ինչպէս Եւրո-
պոյացիք ալ հոգեկան նոյն վիճա-
կը եւ խորհրդակերպը պիտի ունենա-
ինք եթէ Չինաստան մեզ զը-
կէր պոռտալուկան կամ թափաթ
միսիոնարներ որոնք իրենց հետե-
ւողներ հաւաքելին մեծ քաղաքնե-
րու մէջ փողոցային եւ ռաւիկ մտի-
խէն: Այս ընթացքին մենք ընդ
երկար ներողամիտ չպիտի գտնուե-
ինք: Ուստի Չինաստանի մէջ,
միսիոնարները իբր խռովարար
տարր նկատուած են. եւ երբ
անոնք խռովութիւններու պատճառ
կրնան կրօնափոխ ընելով, կամ
ժողովուրդը զանոնք կը ջարդէ կամ,
կառավարութիւնը խռովութեան մեղ-
աակից նկատելով կը պատժէ: Պէտք
չէ Յրանասի պաշտպանութեան դի-
մին լոկ կրօնական բնոյթ ունե-
ցող այդ օրինակ դէպքերու առ-
թիւ. եւ նոյնպէս Յրանասն
պարտաւոր չէ կրօնական խնդի-
րներու համար իր դիրքը մշտական
վտանգի ենթարկել:

Միւս կողմէ եթէ միսիոնարները
կրօնական բրոքականտէ ձեռք քա-
շելով, իրենց մուտ դռած երկր-
ներուն մէջ իրենց հայրենակիցնե-
րուն քաղաքական եւ վաճառակա-
նական ծանօթութիւններ տալու ըզ-
բաղին եւ այսպիսով անոնք Սպի-
տակներուն ապօրինի ստանձնութիւ-
նը զիւրաշնեն, անքանակսն պիտի
ըլլայ որ Բէքինի կառավարութիւ-
նը ներողամիտ գտնուի անոնց շար-
ժումներուն: Եւ պիտի ջանայ զա-
նոնք զսպել. Եւրոպայն պիտի մի-
ջամտէ: Այսպէս եղաւ քանիցս Ժ.Թ.
դարու մէջ. նոյնը եղաւ նաեւ
1900 ին: Այդ պարագային միսիո-
նարները կը մոռնան թէ իբրեւ կրօ-
նականներ ամէն բանէ առաջ խա-
ղաղութեան պաշտպան են, մինչ-
դեռ իրենք կըլլան արշաւող բա-
նակին կարագետները: Ալ աւելին
կայ. երբեմն հրազէն ալ կը գոր-
ծածեն, ինչպէս կը պատմէ Ծավրէ
Եպիսկոպոսը, եւ շատ վար գներով
կը գնեն զինուորներուն աւար ա-
ռած առարկաները: Եթէ այս ե-
ղանակաւ անոնք աւետարան կը
քարոզեն Չինաստանի մէջ, հակա-
նալի է թէ Չինացիք զանոնք կը
նկատեն պատուհաններ, որոնց դէմ
չեն կարող շատ անգոյշ վարել:
Վերի նկատումները թուելով, հա-
կաղեքականները կեղեկացնեն թէ
միսիոնարներու կրօնական գործու-
նէութիւնը միայն բացասական ար-
դիւնքի կը հասնի, այնպէս որ, այն-
չափ տարիներու իրենց գործողու-
թեամբ միայն «վակապոնտ» ներ կըցած

են հաւատարմի ընկ: Բրիտա-
նէութեան բրոքականտը գովեստի ար-
ժանի պտուղներ չէ տուած, ջատա-
գովներու ըսածին հակառակ:

Հետեւաբար: Կրսն հակակղերա-
կանները, Ֆրանսական կառավարու-
թիւնը որ կրօնական տեսակետով ան-
տարբեր կը յայտարարէ ինքզինքը,
պարտաւոր չէ ոչ պաշտպանել եւ
ոչ նպաստաւորել օտար երկրներու
մէջ կղերականները զորս ինք կարգիչ
իւր բուն երկրին մէջ: Աւելի զօ-
րաւոր պատճառաւ. չկրնար զանոնք
իր քաղաքական պաշտօններու գոր-
ծածել: Միսիոնարները եթէ իրենք
կուղին կրնան Չինաստան եւ այ-
լուր կըլթալ, հոն ճանչցնել քրիս-
տոնէութեան վիճակները, թէեւ
առանց մեծ յաջողութեան, եւ ի
հարկին տանջանքներ կրել, յաւիտե-
ական կեանքին սերուն համար,
ողջ ողջ այրուել, խաչիլ, յոշոտուիլ
ու կտոր կտոր մանրուել ամբոխ-
ներէն որոնց հաւատքը եւ բարբեր
իրենք պարտաւած են. սա
իրենց գործն է. ոչ ոք իրաւունք
չունի զանոնք կրթելու արգելելու:

Եւ սակայն միսիոնարները խնդրէն
գուրս ձգելով, եւրոպական կառա-
վարութիւնները երբեք չպիտի թերա-
նան, եւս հարկ դառնեն, Արեւելք-
ցիներէն երկիր մը գրաւելէ, գայ-
լին ու գաղութներն առածին նման
«Ջուրը կը պղտորես» ըսելով: Ի հար-
կին անոնք կրնան հրահանքեր տալ ի-
րենց դիւանագիտական գործակալնե-
րուն հիւպատոսներուն, ստանձնութեան
պատրուակներ ստեղծելու համար:

ԾԱՂԿԱՔԱՂ

Թէ ամերիկացիք ինչ աստիճան
գործնական մարդիկ են, կը վկա-
յեն հետեւեալ կանոնները, զորս անգ-
ղական լրագիր մը մէջ կը բերէ:

—Մի սպասե՛ք բարեկամ լրագրեա-
նին, այլ ստեղծէ՛ զայն ինքը:

—Օտեղէք պատանիները հաստա-
տամոտութեամբ ու գրել կարգալով, եւ
ոչ ոք պիտի նախատեսէ թէ մինչեւ
ուր պիտի առաջնորդէ զանոնք յաջո-
ղութիւնը:

—Միշտ աչքիդ առնել ունեցի՛ր ան-
փոփոխ նպատակ մը, մի՛ վտանգ
ուժեղ անպատակ տատախումբի մէջ,
մի՛ մտածե՛ր զանազան գործերու վը-
րայ, հապա միշտ մէկ գործի մը վրայ
յամտարար:

—Բարեկեցիկ ձուեր ունեցի՛ր, քա-
ղաքավար մարդուն հարստութիւն
պէտք չէ. ամէն դուռ բաց է անոր,
եւ ամէն տեղ կրնայ մտնել առանց
վճարելու:

—Ունեցի՛ր յարգանք դէպի քեզ եւ
բոլոր ուժերդ, այս է ուրիշներու վը-
տահութիւն ներշնչելու լաւագոյն
միջոցը:

—Աչիւստէ՛ կամ մեռի՛ր, այս է
բնութեան նշանաբանը:

—Եթէ դադրիս աշխատելէ, կը
մեռնիս մտաւորապէս, բարոյապէս,
Ֆիզիքապէս:

—Վարժուէ՛ խնայողութեան ու ճշ-
գապահութեան. կրնա՛վի՛ր կատարուած
12 գործեր լմնցած գործ մը չեն
արժեք:

—Կեանքդ այն կըլլայ, ինչ որ
կընես դու զայն, բնութիւնը մեզ
կը դարձունէ՛ այն որ անոր կու-
տանք:

—Չկայ ոչինչ թանկագին քան յա-
րատեութիւնը ու համբերութիւնը:

Այս երկու յատկութիւններէն կընստ
վառան ըլլալ նպատակիդ հասնելու :

..

Բեղերսպուրէն հետեւեալ հետաքրք-
րաշարք իրողութիւնը կ'իմացնեն

Պալիկեան նաւատորմիւր չմեկնած
Ձարը իր պալատը կանչելով ծովակալ
Բաժնետիրներէն զայն մտցուց այն
սենեակը, ուր կը գտնուէր Ձարուհին
փաթիկի դահածառնը գերկը :
«Բռնեցէք աղեկին ձեռքը » ըսաւ
Ձարը : Մովակալը հնազանդեցաւ :
«Մովակալ, որդիդ զձեզիդ օրհնէ » ըսաւ
այն ատեն Ձարը : Եւ իրօք, աղուն
թաթիկէն ծովակալը ընդունեց մետաղի
մը մեծութեամբ սրբուն կերպով քան-
դակուած պատկերիկ մը :

Պ Ա Շ Տ Օ Ն Ա Կ Ա Ն

... Խմբագիր

«Շարժում» 655 եւ 660
թիւերուն մէջ Տպարիշի քահանային
եւ ազգայիններու մասին տեսնուած
գրութիւնները անտեղի զրպարտու-
թիւններ էին, գրուած Պալիքը ու
նախկին Երանայեան Տէր Մկրտիչեանի
եւ Սիւրբաբէյի ճամբորդի մը կողմէ :
Այդ գրուածքները տղայամտութեան
արգիւնք ըլլալով, ներկայիս կու-
գանք մեր ցաւը յայտնել, եւ կը
յուսանք որ ուրիշ անգամ մեր ե-
րեստարգներ այսպիսին գաղափար-
ներով ի զօւր ժամավաճառ չեն ըլ-
լար :

Ի Դիմաց Թաղ . Խորհրդոյ

Ատենադպիր

Ատենապետ

Յ. ՄՈՒՐԱՏԵԱՆ

18 հոկտ . 1904

80ՊՐԻԶ

(Կնիք)

Ա Ղ Ք Ա Տ Ա Ի Ն Ա Մ Ը

Ամսոյս 16 ին գումարուող ընդհ .
ժողովոյ մէջ կատարուած Գործ .
ժողովոյ ընտրութիւնը ըստ օրինի
ամբողջացած չըլլալուն պատճառաւ,
Դիւանո ներկայիւս կուգայ թախան-
ձանգին խնդրել պատուարժան ան-
դամներէ որ ի սէր ազգատեց յա-
րեհաճին ներկայ գտնուիլ յառաջի-
կայ կերակի (31 հոկտ .) գումար-
ւելիք բնդ . ժողովին , ազգ . վար-
ժարանի մէջ կէսօրէ յետոյ ժամը
2 ին , ուր պիտի կատարուի Գործ .
ժողովոյ վերջնական ընտրութիւնը :
Այս չորրորդ հրաւերը ըլլալով ,
ներկայ գտնուող անդամաց թիւը ինչ
որ ալ ըլլայ , ըստ կանոնադրի ընտ-
րութիւնը պիտի կատարուի , որով
յետոյ դիտողութիւնք անկողի կը մը-
նան :

Դիւան Բնդ . ժողովոյ

Ատենադպիր

Ատենապետ

Յ . ԴՈՒՐԱՏԵԱՆ

26 հոկտ . 1904

Վառնա

ԱԶԳԱՅԻՆ

Կիլիկիոյ Ս. Կաթողիկոսը նա-
մակաւ մը Օրմանեան պատ-
րիարքին իր ի մօտայ մեկնե-
լու մտադրութիւնը իմացնելով
խնդրած է որ Կիլիկիոյ Վան-
քին համար նպաստներու հա-
ւաքումը փութացուի : Արդէն
Պոլսոյ մէջ մէկ քանի հարուստ
ազգայիններ անձամբ կամ նա-
մակի մը մէջ չէք մը գնելով ի-
րենց նուէրները հասուցած են
Պատրիարքին :

— Երուսաղէմի ծանօթ հա-
շուական խնդրոյն համար , Ե-
րեցեան եպիսկոպոսի առաջար-
կութեամբը Պոլսոյ վարչութիւ-

նը որոշեց անկողնակալ անձե-
րէ քննիչ յանձնախումբ մը
կազմել Պոլսոյ մէջ . և որպէսզի
այդ յանձնախումբին վճիռը
անվերաբնեւի և պերշնակայ
ըլլայ , որոշուած է յանձնա-
խումբի անդամներու մասին
երկու կողմին ալ գրաւոր հա-
ւանութիւնը առնել ըստ օրինի :

— Տարօնի արկածեալներուն
ի նպաստ Մարտիկոյ ազգային-
ներու մէջ հանգանակութիւն մը
բացուելով , գոյացած գումարը
500 Ֆր . ղրկուած է Պատրի-
արքարան :

— Շատախ գիւղաքաղաքին մէջ
(Վանի նահանգ) Հայ վարժարան
մը բացուեր է 5 ուսուցիչներ-
ով : Ատենց մէկին Վանի կաթո-
լիկները տուեր են 10 ոսկի , 2ին
աւսականը կը վճարեն եզեր բո-
ղոքական միախնարները , իսկ
միւս 2 ուսուցիչները տեղացի
ժողովուրդէն և Պոլսոյ մեր պատ-
րիարքարանէն իրենց վարձքը
կը ստանան : Օրինակելի տարօ-
րինակութիւն մը չէ՞ այս :

Կ . ՊՈԼԻՆ ՆԱՄԱԿ

3 Հոկտեմ .

Սուրբանը , Մուրատին մա-
հէն յետոյ , գահաժառանգ Բէ-
շատ—Էֆէնտի և իր եղբոր
Քէմալէտտին Էֆէնտիի առա-
ջարկեց Ձարուանի պալատին մէջ
բնակել , բայց կայսերազուն-
ները մերժեցին այս կասկա-
ծելի առաջարկը :

Ապտիւլ—Համիտ Նոյնպէս ու-
ղեց Մուրատի այրին Երւար-
դի պալատին մէջ բնակեցնել :

Իշխանուհին ալ վճարական կեր-
պով մերժեց այս առաջարկու-
թիւնը , Մեւնուր Սուրբան Մու-
րատի չուրջը գտնուող կիներու
մէկ մասը Հիճազ արտադրեցաւ
և միւս մասը Սթանպուլի Էսկի—
Սէրայի մէջ բանտարկուեցաւ :

Կառավարութիւնը կը ջանայ
2,000,000 օսմ . լիւրայի փոխա-
ռութիւն մը կնքել ֆրանսայի
գեսպանատան միջնորդութեամբ
Դեսպանատուն պատասխանեց Դը-
րան թէ պէտք եղած դիւ-
րութիւնները պիտի տայ , պայ-
մանաւ որ Դուռը Պէրութի եր-
կաթուղիին և գեսպանատան քա-
նի մը կարեւոր խնդիրները
փութով կարգադրէ :

Ապտիւլ—Համիտը շատ յոգնած
է : Իր շուրջը գտնուողները ա-
նոր առողջական վիճակէն վախ
ունին : Կը հաւատացուի թէ հի-
ւանդութիւնը սուր կերպարանք
առած է և իր վախճանը մօ-
տալու է :

Երւարդի Սէրալըգը այցե-
լողները նշմարած են թէ Սուր-
բանը հակառակ իր դէմքը
ներկելուն հողագոյն կերպա-
րանք մը առած է , որ այցե-
լուններուն վրայ ծանր տպաւո-
րութիւն մը կը ձգէ :

Տասը օր առաջ Երւարդի շուրջը
գտնուող զօրանոցի մը մէջ բաւա-
կան ծանր իրադրանքով մը տե-
ղի ունեցաւ : 3 զինուորներ որոնք
6 ամիսէ ի վեր իրենց զինուո-
րական ծառայութիւնը լրացու-
ցած էին , ի զուր իրենց հայրե-
նիք վերադարձի արտօնութիւն
կը պահանջէին անոնք սպանե-
րու և ենթադրանքով վրայ
հրացան պարտեցին զիրենք
պատժելու և ինչպէս համար : Ապա

ՆԵՐՍԵՍ ԱՅՏԱՐԱԿԵՑԻ

(Արտատպուած ԲԱԶՄԱՎԷՊ հանդէսէ)

Ստաւրոպոլի Ռուսաց Վեճակաւոր արքեպիս-
կոպոսը խնդրեց կաթողիկոսին , որ միջնորդ լի-
նի փոխարքայ իշխան Վարանցովի մօտ՝ չտե-
ղափոխել իրան Ստաւրոպոլի վեճակից . տեղա-
փոխելու պատճառն այն էր , որ կուլակ զօր-
քի եւ նահանգի ուսու բնակիչներէ մէջ շատերը
հին աղանդաւորներ էին եւ այս արքեպիսկո-
պոսը խտուութիւն էր գործ գնում նորանց գէմ
որով եւ առիթ էր լինում կուլակ զօրքի մէջ
վրդովմունք ընկնելուն : Վարանցովի հասանք
դեկտեմբերի 13 — ին , վերը յիշել եմ Դա-
ղատանից գերի ընկած միւրոսանի մասին : Նո-
րանից մէկի համար Նիքիտը Նիկոլայ կայսրից
խնդրել էր , զինուորական նախարար կոմս
Չեքմիշովի միջոցով , ազատութիւն չնորհել հայ-
րենիք դառնալու . կայսրը բարեհաճել էր Ներ-
սէսի խնդրանքի համաձայն չնորհել նորան ա-
զատութիւն : Այդ լեզուին մեզ հետ բերեցինք
մինչեւ Վարանցովի եւ կաթողիկոսը , նա
խարարի գրութեան համաձայն , յանձնեց անգլոսի
կոմսիզանտին , որ կտրգադրեց անվտանգ հասցը-

նել նորան բնակավայրը . մենք ուղեւորեցինք
գէպ ի Թիֆլիս . վարանցով փոխարքայ յառա-
ջագոյն կարգադրել էր . որ անվտանգ ճանա-
պարտութեան համար կաթողիկոսին ուղեկցին
կովկասի սարերում հարիւր ուլան զաղախ
մայիօր Լուկանսկու հրամանատարութեամբ : Կա-
թիկից մինչեւ Կորի իջեալը կառքով եկանք .
իսկ այնտեղից կաթողիկոսին եւ նորա հետ
եղբորներին սանաւներ նստեցրին եւ հասցրին
Քայապուռ , ուր կաթողիկոսին գիշերելու տեղ
էին պատրաստել իշխան Աւալովի տանը : Կա-
թողիկոսական կառքն էլ անիւները հանած սա-
նակի վերայ դրած քան զինուորի հսկողու-
թեամբ բերել տուին : Մինչեւ Քայապուռ հաս-
նելը ստիպուած էինք մի գիշեր մնալ մի լե-
րան լանջի վերայ գտնուող մի կայարանում ,
գիշերը մեղանից մի վերստ հետաւորութեամբ
սարից սառտիկ գորգովով ձիւնը փլուեց ան-
գին կոյտով եւ մեր ճանապարհ փակեց , առա-
ւօտեան զինուորները գնացին չըջակայ օսի գիւ-
ղերը մշակներ բերեցին , ճանապարհը բաց արին :
Քայապուռից իսկոյն շարունակեցինք ճանապար-
հը եւ գիշերն հասանք Փուլէթ քաղաքն : Այն-
տեղ կային Թիֆլիսից վաճառակտներ , որոնք
Մոսկուայից էին վերադարձել : Նորանք գիշերը
գնացել էին Թիֆլիս եւ քաղաքացիներին աւե-
տել Նիքիտի Դուլէթ ժամանելը . միւս օրը
դեկտեմբերի 17 —ին վերադարձ (Թիֆլիսի ծայ-
րը) համարեալ ամբողջ քաղաքը ընդ առաջ էլ

նկել կաթողիկոսին — հայ , ուսու , վրացի եւ նո-
րանց հետ նաեւ Նշանաւոր աստիճանաւորները :
Վերայից մինչեւ վանքի աւագ եկեղեցին հասնե-
լը տեւեց և ժամ . հնար չկար բազմութիւնը
ճեղքելու . վանքի աւագ եկեղեցու սրահն ար-
դէն ժողովուրդն սիրագիտել էր . հազիւ կաթո-
ղիկոսը կարողացաւ եկեղեցին մտնել եւ մի քա-
նի խօսք ասելով օրհնել ժողովուրդին , եկեղե-
ցուց դուռն եկաւ թէ չէ , գիւ ճանապարհի
հագուստով էր , փոխարքայ իշխան Վարանցով
վրն եկաւ տեսնութեան : Երկու վաղեմի ըսրե-
կամները գրկախառնուեցին եւ համբուրեցին , ա-
պա իշխանը կաթողիկոսին իւր պալատը ընթրի-
քի տարաւ :

Թիֆլիսի առաջնորդ Կարապետ արքեպիսկոպո-
սի , կոնստանտնուպոլի անդամներ , եւ ատենա-
դպիր Յակովբ Կարինեանցի ու Վրաստանի թեմի
բոլոր յաջորդ վարդապետներն եւ գործակալ քա-
հանաների վերայ , թէ Թիֆլիսից եւ թէ բո-
լոր քաղաքներից բողոքներ էին հաղ-
րութեանը . բողոքել էին սորանք ապօրինի
արարքների եւ կաշառուութիւնների մասին :
Կառավարութիւնը այդ բողոքները թողել էր
կաթողիկոսի քննութեան եւ վերահաստիճան

(Շարունակելի)

Одговорникъ А. Курбетиянъ
печатница "Взаимность." — Варна